Գիրք քանդակին՝ գովեսաք տողին՝ բանք ի նոսին՝
յերիւրին.
Զի զմեռելոյն, զի զանցելոյն՝ միշտ առ յապայն կե-
նաց ճառ,
Փոխան գործոց՝ գիր խօսեսցի՝ գոգ վէպ անանց՝
կացցէ քար։
Իսկ քեզ առ ի՞նչ՝ արձան վիմարդ՝ կամ ոսկեզօծ՝
ներբողեան.
Եթէ դու ինքն քեզ կառուցեր՝ զամրակառոյց մա-
հարձան.
Եկեղեցիս այս Տիրամօր՝ քո պերճ անուան՝ միշտ
քարող,
Քեզ օրհնութիւն՝ աւուր աւուր՝ սա երգեսցէ յա-
ւիտեան։
Է՛րթ վաճառեա՛ ասաց Յիսուս՝ զինչս քո տո՛ր
աղքատաց,
Ա՛հա գանձք իմ՝ Տէ՛ր բարեխնամ՝, կարօտելոց ահա
հաց.
Զայս ասացեր՝ տուն շինեցեր՝ դու Աստուծոյ հոյա-
կապ,
Եւ զկայսերն եառուր կայսեր, որ զքեզ խաչիւ՝
պսակեաց։
Աղէ՜ քո գանձք՝ անդ են յերկինս՝ անապական՝
կենդանի.
Հաւատք և գործք՝ անդ ձեռն ի ձեռն՝ քեզ զու-
գընթաց յատենի։